ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2026թ. թիվ 11-Ա

Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշման թիվ 1 հավելվածի 85-րդ կետը և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի և Հ.Մաթևոսյանի միջև 2025 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված համաձայնագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

«Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հերմինե Մաթևոսյանի հետ 2020 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը երկարաձգել երեք տարի ժամկետով՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 25-ը:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունվարի 13
ք.Վանաձոր